ԿԱՐԻՆԵ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ

# ՈՒՍՈՒՑԱՆՈՂ ԱՌԱԿԱՆԻ



# ԵՎ ՀԱՄԱՏԵՂ

# ԼԵԳԵՆԴՆԵՐԻ ՃՈԽ ԸՆՏՐԱՆԻ

III ՄԱՍ

ԵՐԵՎԱՆ-2012

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ



ԽՈԶՆ ՈՒ ՇՈՒՆԸ
ԷՋ-3



ՉԱՐՆ ՈՒ ԲԱՐԻՆ
ԷՋ-13



ԱՂՔԱՏՈՒԹՅՈՒՆ
ԷՋ-20



ԳԻՆԻՆ
ԷՋ-28



ԵՐԴՈՒՄ
ԷՋ-33



ԳԾՈՒԾԸ
ԷՋ-43



ԿԱՐԱՊԻ ԵՐ ԳԸ
ԷՋ-50



ՃԱՆՃԸ
ԷՋ-55

# ԽՈԶՆ ՈՒ ՇՈՒՆԸ

Մայր խոզը երեք
Գոճի էր ծնել,
Հալից ընկել էր,
Տեղից չէր ելել,
Որոշեց՝ դուրս գա
Իր խոնավ բնից,
Պառկի արևին,
Կազդուրվի մի քիչ:
Բակում նկատեց
Գայլախեղդ շանը,
Որը ապրում էր
Հարակից պանը:
Նրա ձագերը
Իրար գզելով՝
Խաղ էին անում՝

Պաղկանձ հանելով:
Աղմուկ-ժխորից
Խոզը կատաղեց,
Անտարբեր մորը
Ամոթանք տվեց.
-Սաստի'ր, որ լռեն,
Հո չե՞ս խլացել,
Պարծում ես՝ միայն



Դո՞ւ ես մայրացել:
Թուլեքիդ սասապիկ
Երես ես պվել,
Խոճկորիկներիս
Չեն թողնում քնել:
Դիպողությունից
Ծունը սրպնեղեց,
Փնթի գիրուկին



Բառերով խայթեց.
- Նախանձն է խոսում
Մեջդ, գարշելի',
Թո'ւ, ի՜նչ կեղտոտն ես,
Նեխած, զազրելի,
Ողջ քակը լցրիր
Գարշահոտությամբ,
Օդն աղտոտեցիր
Քո ներկայությամբ:
Իսկ երեք հոտած
Գոճին որ ունես,
Ձագուկներիս հետ
Չհամեմատես:
Նրանք յոթ ալյան
Քույր-եղբայրներ են,
Ամբողջ փարածքի

Լիիրավ պերճ են:
Աստծուց օրհնված
Բեղմնավոր մայր եմ,
Էրան եմ ծնում,
Չեմ կարում համբեմ:
Մի քանի աղպոպ
Խոզուկ ես ծնել,
Տեր-փիրականի



Տե՞ղ ես քեզ դրել:
-Ոա'հ, էս քուսոպին
Հլա մի պեսեք,
Սրա անպապկառ
Խոսքերը լսեք,
Քոռ լակոտներդ
Ծնված վայրկյանից
Որ փակ աչքերով
Աշխարհ են գալիս,
Մինչ լույս պեսնելը
Կույր են, անպաշտպան,
Լրիվ անզոր են
Եվ անօգնական,
Կիաղթի նրանց
Ամեն թույլ գազան:
-Երբ որ ձագերիս




Չնչին արարքը
Էդպես ծաղրում ես,
Քո արհամարհված,
Մերժված վիճակը
Դու մոռանո՞ւմ ես:
Կեղտո'տ աղբակեր,
Ցեխո'տ, զզվելի',

Ճարպի մեծ գունդ ես՝
Արգահատելի,
Դրա համար էլ
Բազում սուրբ գրքեր
Կրկնում մերժում են
Միսը ճաշակել:
-Հիմա՛ր չարախոս,
Տգե՛տ զազրախոս,
Եթե չգիտես
Դու քուն պատճառը,
Ի՞նչ ես բարբաջում
Անիմաստ ճառը...
Արգելք են դրել,
Պարզորոշ գրել,
Որ մարդիկ կարդան
Ու փեղեկանան,

Թե խոզին ինչպես
Պիրի մեծարեն,
Դանակը երբեք
Վզին չդնեն,
Քեֆի սեղանի
Զարդ չդարձնեն:
-Այ պիղծ արարած,
Հերի՛ք լեզվիդ պաս,



Բա՛վ է անհեթեթ
Սպեր բլբլաս:
-Իրա՛վ ես ասում,
Արի՛, էլ իզուր
Չչարախոսենք.
Ինչքան գարշահոտ
Աղբը փորփրենք,
Մեկմեկու նախշենք,
Առավել թունոտ
Բաներ կհիշենք,
Մինչդեռ դրանից
Ծահ անգամ չունենք:
Ավելի լավ չէ՝
Չհակառակվենք,
Իրար առավել
Չպախարակենք:

# ՉԱՐՆ ՈՒ ԲԱՐԻՆ

Ասում են թե, երբ որ կերպեց,
Շունչ-կյանք փչեց մարդուն Տերը,
Արարվածի ուսից կախեց
Չարի, բարու զույգ պարկերը:
Եվ պապվիրեց սիրած որդուն՝
Ապագայում ինչ որ անի,



Լինի բարիք կամ էլ՝ չարիք,
Նախապրեսված փեղը լցնի:
Լավ գործերի թիվն ու քաշը
Հենց մեծանա ու ծանրանա,
Աղամորդին արածներով
Դիրի արքանց ուրախանա,
Այնինչ եթե վատ գործերի՝
Երկրորդի քաշն ավելացնի,
Հարկ է խորհի՝ ինչպես անի՝
Չարիք-պարկը թեթևացնի:
Իսկ երբ նրա մահվան օրը՝
Հրաժեշտի պահը կգա,
Վկա-պարկերն ուսին գցած՝
Ճամփան թող իր մոտը գա:
Քննարկելով, թե ինչպիսի
Արարքներ են այնտեղ պահվում,

Արդարադատն այդժամ կասի՝
Որդին ուր է ճանապարհվում:
Ափսո՛ս, մարդը Աստծո խոսքը
Արհամարհեց կամ չընկալեց,
Կյանքում բազում ափեր փչեց,
Գազանաբար մարդ սպանեց,
Թալան փվեց ու գրպանեց,
Հա'մ ուրացավ, հա'մ շնացավ,



Չար գործերի պարկի քաշն էլ
Ինքնըստինքյան ավելացավ:
Որ աչքից հեռու վանի
Անփառունակ նվաստ վարքը,
Մեջքի կողմից նա կախ տվեց
Լի ու փռուզ մեղքի-պարկը:
Այդ պատճառով անմիտները
Չեն նկատում ու հասկանում,
Թե օրեցօր շալակներին
Ի՜նչ մեծ բեռ է ավելանում,
Գոհանում են ուսից կախված
Փոքր ու նվազ բարիք-պարկով,
Հպարտանում իրենց չնչին
Բարի գործով ու վաստակով:
...Շատ-շատերն են հանդիպելով
Ստերմաբար գրույց անում,

Դեմ հանդիման հայտնվելով՝
Միմյանց բարքն են գովաբանում,
Իսկ երբ խոսքը ավարտելով՝
Ճուռ են գալիս և հեռանում,
Չար գործերը նրանց մեջքից
Ծիկրակում են, աչքով անում:
Դրա համար սովորաբար
Ինչ երեսին պարզ չեն ասում,



Ճիպտակ խումբը, որպես կանոն,
Երկից են միշտ բամբասում:
...Իրականում ոչ մի մանրուք
Տիրոջ աչքից չի վրիպում,
Տեղյակ է Նա որդու վարքից,
Գաղտնի պահված ամեն անցքից,
Բայց դե թաքուն գողանալով,
Ծածուկ ափոր դավ նյութելով`
Տիմարն իրեն հույս է տալիս,
Թե ոչ մեկը դա չիմացավ
Կամ արածը չհասկացավ:
Չի' գիտակցում կամ հասկանում,
Որ հոգին է իր կործանում,
Խարդախորեն մեղանչելով`
Սատանայի գիրկն է գնում:
Իր չարամիտ արարքները



Մարդկանց աչքից գուցե ծածկի,
Բայց Տիրոջից ո՞վ կծածկի...
Օրենք է սա: Ամբարիշտը,
Հեփեսանքով անարգ բարքի,
Լինի վաղը կամ թե` քիչ ուշ,
Կպատժվի Երկնավորից`
Ի հատուցում ճղճիմ վարքի:

# ԱՂՔԱՏՈՒԹՅՈՒՆ

Բազում ապրվածներ
Հին Հունաստանի
Հավաքվել էին
Ծննդյան տոնի.
Աֆրոդիտեն էր
Լույս աշխարհ եկել,
Գեղեցկությունն էր
Կյանք-ծնունդ առել:
Հասույթը` որդին
Ծեր Իմաստության,
Պարպեց գավաթներ,
Շատ զվարճացավ,
Բայց անմահական
Խմիչքը` գինին,
Խելքաման արեց,



Շուրով զինովցավ:
Դուրս եկավ այգի,
Միայնակ շրջեց,
Դառկեց ծառի փակ,
Փոքր-ինչ ննջեց:
Աղքապությունը
Հենց դա նկապեց,

Պարեհ առիթը
Էլ բաց չթողեց,
Որոշեց՝ հարուստ
Այրին հմայի,
Հաջողակ մարդուց
Մի զավակ ծնի,
Որն ապագայում
Շահույթ կբերի:
Հեզիկ մոտեցավ
Հարբած Հասույթին,
Պառկեց նրա մոտ,
Հասավ ուզածին:
Ինն ամիս հետո
Երեխա երկնեց,
Նորածին որդուն
Էրոտ անվանեց:

Քանի որ դեպքը
Այն օրը եղավ,
Երբ Աֆրոդիտեն
Լույս աշխարհ եկավ,
Տղան ի վերուստ՝
Երկնքից, օծվեց
Անսահման սիրով
Դեպ գեղեցիկը,



Դեպի վայելքը,
Հաճույքն ու կիրքը:
Ծառանգեց նաև
Պապի մեծ խելքը,
Հորից՝ վերելքը,
Մորից՝ վայրէջքը:
Այժինքն՝ դարձավ
Անչափ իմաստուն,
Շնորհիվ իր հոր՝
Ձեռք բերեց բազում
Նյութական բարիք՝
Ինչք, հարստություն…
Ավա՛ղ, ամենը
Հերթով կորցրեց.
Մոր ով լինելը՝
Աղքատությունը,

Ու գործը արեց:
Էրուպը կյանքում
Ամեն բան փեսավ,
Բնապուր խելքով
Ճահույթի հասավ,
Մինչդեռ կանանցով,
Ձեխությամբ պարվեց,
Գինու նեկպարն էլ
Չար գործը արեց,
Մսխեց վասպակը,
Անիմաստ վապնեց,
Մնաց թալանված,
Լրիվ գլխաբաց,
Ամենքից լքված,
Մոլած ու լլկված:
Նա դարձավ աղքատ,

Թափառական մարդ՝
Գթություն հայցող,
Դրամ մուրացող
Խղճուկ մուրացկան,
Կյանքից հալածված,
Բախտից անպեսված
Հեգ թշվառական:
Աղքատությունը՝





Մայրը սիրասուն,
Մենակ չթողեց
Զախողակ որդուն,
Լքված զավակին
Իր գիրկը առավ,
Ծով-թշվառության
Ամրոցը փարավ:

# ԳԻՆԻՆ

Երբ հայրնի դարձավ
Մարդ արարածին՝
Ինչպես են սարքում
Կարմրածոր գինին,
Նա մեծ փափկաչով
Խմիչք պատրաստեց,
Ամենքին սիրով
Համպեսի կանչեց:
Գերասպվածային,
Անուշ նեկտարը
Հյուրերը հերթով
Լուռ ճաշակեցին,
Համով հիացած՝
Գովաբանեցին,
Հմուտ վարպետին



Երկինք հանեցին:
Մեկ գավաթ ըմպած
Քաղցրահամ գինին
Մարդկանց թարմացրեց,
Ծարավը կտրեց,
Երկրորդ գավաթը
Հենց դատարկեցին,

Զուռնա-դհոլի
Ձայներ հնչեցին,
Բայց որ երրորդը
Փորը քաշեցին,
Ծափերը հարբած՝
Գետնին փռվեցին,
Իսկ մի քանիսն էլ,
Ցեխը ընկնելով,
Խոզերի նման
Թավալ պվեցին:
Ամանք հին ու նոր
Դարդը հիշեցին,
Արցունք թափելով՝
Ցավից ոռնացին,
Մի մասն էլ, քենը
Մպաքերելով,



Դանակ քաշեցին,
Կռիվ սարքեցին:
Քեֆերի վերջում,
Ճոխ հանդեսներում,
Խմիչքով առատ
Խրախճանքներում
Ճիշտ նույն պատկերն է.

Եթե ընկլում ես
Նեկտարը գինու
Առանց բաժինդ
Չափավորելու
Կամ հույժ կարևոր
Փաստը հիշելու,
Որ առաջինը
Անմեղ բաժակ է,
Գավաթը երկրորդ
Քեֆ ու կայտառ է,
Մինչդեռ երրորդը
Ողբ ու դանակ է.
Կարող ես չափդ
Խապառ կորցնել,
Գլխիդ մեծամեծ
Փորձանքներ բերել:

# ԵՐԴՈՒՄ

Ճարպիկ ու խարդախ
Մի մարդ էր ապրում,
Խիղճը կորցրած՝
Կեղծում էր, խաբում,
Թալան էր փախս,
Աջ ու ձախ սփռում,
Մեռած հոր անվամբ
Երդում էր ուտում:
Օրերից մի օր՝
Լուսնյակ գիշերով,
Երբ տուն էր դառնում
Լքված վայրերով,
Հանկարծ նկատեց
Անծանոթ մեկին,
Որը նստած էր

Լորենու փակին:
-Էյ, ո՞վ ես, աաա',
Քեզ չեմ ճանաչում,
Դարան ես մրել,
Հեչ չե՞ս ամաչում,
Անցո՞րդ ես փնտրում՝
Գոփես, կողոպտես,
Ի՞նչ է, մի գրամ



Խղճի խայթ չունե՞ս,
Հանցանք ես գործում,
Գոնե դա գիտե՞ս:
-Քո արշինով ես
Բոլորին չափում,
Երդումն եմ մարդկանց,
Չե՞ս մպաբերում,
Ողջ օրը դո՞ւ չես



Ինձ վկա բերում:
-Հա՛, երբ պապացիր,
Տեղը բերեցի,
Հաճախ ես օգնել,
Բա ո՛նց, հիշեցի:
Լուռ ու գլխահակ
Ուշ ժամին մենակ
Ամայի վայրում
Ի՞նչ ես որոնում...
Կա'ց, ես կարծես թե
Գլխի եմ ընկնում,
Լքո՞ւմ ես դու մեզ,
Անպե՞ր ես թողնում:
-Ճիշտ էլ իմացար,
Լավ գուշակի պես,
Սրից զզվել եմ,
Հեռանում եմ ես:

Խաբեբան մտքում
Ցնծաց և հրճվեց,
Անմեղ հայացքով
Վրկին հարց տվեց.
-Իսկ որ հեռանաս,
Նորից ետ կգա՞ս,
Թե՛ դու առհավետ
Մեզ կմոռանաս:



-Հիմա չգիտեմ...
Թող մի երեսուն
Տարի անց կենա,
Գուցե զայրույթս
Քիչ-քիչ մեղմանա...
-Դե լա՛վ, ի՞նչ ասեմ,
Բարի ճանապարհ,
Մինչև եփ կգաս,
Ես, հավանաբար,
Հանգուցյալ հորս
Կողքին կլինեմ,
Ցավում եմ, բայց քեզ
Հազիվ թե փեսնեմ:
Հաջորդ օրն ևեթ
Նենգ խորամանկը
Ինչ-որ հնարքով
Թալանեց բանկը:

Երբ որ բռնեցին,
Դատի տվեցին,
Գողն իր ողջ ցեղով՝
Մեռած, կենդանի,
Վեղծ երդում կերավ,
Երկինք ու երկիր
Իրարու խառնեց,
Աստծո անունը



Վկայաբերեց,
Որ պարծից փրկվի,
Կյանքից չզրկվի:
Մեկ էլ նույն պահին,
Չգիտես ինչպես,
Հենց նա' հայտնվեց,
Ում անցած գիշեր
Բարեկամաբար
Հրաժեշտ տվեց:
Թալանչին վախից
Իրեն կորցրեց,
Անկմացնելով`
Երդումին դիմեց.
-Բա ինձ չասացի՞ր`
Թողնում եմ, գնամ,
Երեսուն տարի

Ձեզ կմոռանամ:
-Քեզ իմանալով`
Դիպմամբ ասացի,
Բայց լա'վ իմացիր`
Ես երբեք այնքան
Հեռու չեմ գնա,
Որ ապախտոր
Անպապիժ մնա:



Երբ իմ անունն են
Անհարկի տալիս,
Տվյալ վայրկյանին
Ի հայտ եմ գալիս:
Դու անամոթ ես,
Ներում չապասես,
Հաճախ փրկել եմ,
Էլ գութ չհայցես:
Քո դաս-պապիժը
Բանտում կկրես,
Երդման արժեքը
Գուցե կընկալես:
Սրանից հետո
Երկար կխորհես,
Մինչև անունս
Բերանդ կառնես:

# ԳԾՈՒԾԸ

Հայաստանի մի խուլ շենում
Սաստիկ գծուծ մարդ էր կենում,
Լավ վարպետ էր, աշխատասեր,
Բայց դե ինչքան շատ վաստակեր,
Միևնույն է, նույն քրջերով,
Չուլ-փալասով պիտի շրջեր:
Փողն այնքան էր գնահատում՝
Տարվա կեսը պաս էր պահում,
Մեկ քառորդն էլ՝ որպես թե՝ ծոմ,
Աշխատածը դիզում էր խոմ:
Եթե նրան չիմանային,
Տեսնողները կկարծեին՝
Ողորմելի շրջմոլիկ է
Կամ մի անտուն մուրացիկ է:
Խնայում էր ամեն բանում,



*Ձեռքը գրպան նա չէր պանում,*
*Էժան-մեժան քան էր գնում,*
*Օր էր լինում՝ բերանն անգամ*
*Հացի փշուր իսկ չէր դնում:*
*Էլ չեմ ասում՝ ամուսնանար,*
*Կնիկ առներ, երջանկանար,*
*Ուր մնաց, թե՝ երեխաներ,*

Չէ՞ որ նրանց պետք է պահեր:
Մի բարեկամ կամ հարազատ
Ծնունդ, կնունք թե կանչերին,
Հարսանիքի կանչ անեին,
Չէր էլ գնում, որ փող չպա:
Բայց թե հանկարծ մեկը մեռներ,
Որին նույնիսկ չճանաչեր,
Թեկուզ կողքի շենից լիներ,
Ամենևին դա կապ չուներ,
Անգամ ձմռան ցուրտ ու բքով
Քելեխի էր գնում ոտքով:
Խոսելիք էր դարձել գյուղում,
Թե պահում է գանձը հողում,
Ողջ գումարը իր աշխատած՝
Սնդուկի մեջ դիզած-կիտած:
Լուրը, պահված ոսկու մասին,



Ձեռնաբաշի ականջն ընկավ,
Լրտեսելով փողապաշտին՝
Վերջը դրա տեղը գտավ:
Մութ գիշերով գողը ծածուկ
Հետապնդեց ժլատ զոհին
Ու նկատեց՝ ինչպես գողտուկ,
Մոտենալով հսկա ծառին,

Մի կողքի ծանր քարը
Դեն գլորեց նա շեշտակի,
Փորեց հողը, հանեց մի բան`
Նման արկղ-գանձանակի:
Դողդողացող հասփ մատներով
Դանդաղորեն փուփը բացեց,
Դրամները շոյմոյելով`
Վրան գումար ավելացրեց:
Գանձափուփը զգույշ կողպեց,
Երկինք նայեց, խաչակնքվեց,
Փոսը գցեց ու հորելով`
Քարը դարձյալ վրան դրեց:
Ավազակը ուրախացավ.
Չարչարանքը իզուր չանցավ,
Հաջորդ գիշեր լռիկ-անձայն,
Գողն ու փողը անհեփացան:



*Երբ ժլատը հայտնաբերեց,*

*Որ չարաչար թալանվել է,*

*Հուսահատված գլխին տվեց,*

*Կուրծքը ծեծեց ու արտասվեց:*

*Տեսնողները կարեկցեցին,*

*Մխիթարիչ խոսք ասեցին,*

*Մեկն էլ գնաց, կողքին նստեց,*

Ընկերաբար խորհուրդ տվեց.
-Եթե սառը կշռադատես,
Լավ մտածես, կնկատես՝
Փոքրիկ կորուստ է կրածդ.
Կուրակել ես աշխատածդ,
Չնչին օգուտ իսկ չես քաղել,
Ինչո՞ւ ես զուր ողբդ կապել:
Մնդուկի մեջ քարեր շարիր,
Փողերի տեղ երկրպագիր,
Այս դիպվածն ու պապահարը
Դաժան կապակ դու համարիր:
Թե դրամը ամբողջ կյանքում
Քեզ ոչ մի կերպ չի ծառայել,
Ուրեմն ի՞նչ տարբերություն,
Ապրի՛ր, ինչպես միշտ ես ապրել:

# ԿԱՐԱՊԻ ԵՐԳԸ

*Դրախտի մեջ երկրային՝*
*Լազուրերանգ լճակում,*
*Մի թռչնակ էր լող տալիս,*
*Որին կարապ են ասում:*
*Ճեփ-ճերմակ էր ձյունի պես,*
*Երկարավիզ ու չքնաղ,*



Աչքեր ուներ գեղահեզ,
Լողն էլ՝ արմաղ ու շարմաղ:
Երբիկ փեսքով հիացել,
Ապրված ինքն էր զարմացել,
Թե ի՜նչ հրաշք-պատկերք է
Ողջ աշխարհին մատուցել:
Մեղրից քաղցր ձայն ուներ,
Հենց երգում էր, գեղգեղում,
Խենթացնում էր լսողին,
Խելքն էր գլխից մաղում:
...Հոգեհմա խաղիկով
Հավքը գերեց չար մարդուն,
Որն էլ թռչնին որսալով՝
Բռնի պարավ իրենց տուն:
Ու սպիպեց՝ պաղ սափ,
Խաղեր կանչի ու խոսի,




Բայց կարապը գեղաձայն
Զարպաբերեց գեթ մի ձայն:
Երբ պահանջը անպեսավեց,
Բռնասերը գազազեց,
Դանակն օդում ճոճելով`
Նագուկ գերում փախեցրեց.
-Կա'մ դայլայլիր ինձ համար,

Զովերգ ձոնիր անհամար,
Կա'մ հենց հիմա կբռնեմ,
Պարանոցդ կկպրեմ:
Խեղճը ահ ու սարսափից
Աղիողորմ ճիչ հանեց,
Բայց դա ողբ էր ու հառաչ,
Տաղերգը չէր, ինչ` առաջ:
Հոգու լաց էր ողբագին,
Սուգ-աղոթք էր լալագին,
Աղաչանք էր և աղերս`
Ուղղված Երկնի արքային:
Բռնակալը փրփրեց,
Ձեռքը առավ ու զարկեց,
Կպրեց վիզը թռչնակի,
Որ կականը չկապի:
...Չարաքասպիկ օրվանից



Ճերմակ հավքը չի խոսում,
Մահվան ահից սարսափած՝
Խազեր անգամ չի ասում:
Հրաժեշտի պահին լոկ,
Երբ իր մահն է կանխազգում,
Դյութիչ ձայնով մոգական
Վերջին ներբողն է երգում:

# ՃԱՆՃԸ

Տանտիրուհին փուռը բացեց,
Թանապուրը միջից հանեց,
Շերեփն առավ, որ բաժանի
Ու սեղանի շուրջը տանի:
Նույն միջոցին մի տզզան ճանճ
Կաթսայի մոտ պտույտ գործեց,



Անուշ բույրից իրեն կորցրած՝
Չլմփալով մեջը սուզվեց:
Տաք ապուրը բկլիկի պես
Ագահորեն փորը քաշեց,
Գլխի չընկավ անկշտումը՝
Ոնց մարմինը հեպը խաշեց,
Բայց և այնպես որկրամոլը
Լկտիաբար մեռնախոսեց.
-Որ միշտ համեղ բաներ եփես,
Հարգես, պատվես, հյուրասիրես,
Գուցե ես էլ միտքս փոխեմ,
Ընդմիշտ քեզ մոտ տեղափոխվեմ:
Անկոչ հյուրի լպիրշ վարքից
Տանտիկինը խիստ վրդովվեց,
Աներևակի թևից բռնեց,
Պատուհանից դուրս շպրտեց:

Պնդաճակատ մեծամիտը
Նույնիսկ վերջում՝ մահաժամին,
Իրեն պարտված չհամարեց,
Այրված լեզվով նա բարբառեց.
-Հո' լավ կերա ու կշտացա,
Ապուրի մեջ ես լողացա,
Հոգ չէ հիմա մեռնել այսպես,
Կուշտ ու մաքուր՝ աղայի պես:



ԿԱՐԻՆԵ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ

# ՈՒՍՈՒՑԱՆՈՂ ԱՌԱԿԱՆԻ
# ԵՎ ՀԱՄԱՏԵՂ
# ԼԵ ԳԵՆԴՆԵՐԻ ԾՈԽ ԸՆՏՐԱՆԻ



ՄԻՋԻՆ ԵՎ ԲԱՐՁՐ
ՏԱՐԻՔԻ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԽՄԲԱ ԳԻՐ
ԵՎ ՍՐԲԱ ԳՐԻՉ՝
ՆԱՐԻՆԵ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ

ՄՈՒՏՔԱ ԳՐՈՂ ԵՎ ՀԱՄԱԿԱՐ ԳՉԱՅԻՆ
ՁԵՎԱՎՈՐՈՂ՝
ԿԱՐԻՆԵ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ